

DOI: 10.57192/18291864-2023.1-220

**Վեներա Ռ. Մակարյան**

*Պատմ. գիտ. թեկնածու*

**ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Իսլամական բժշկագիտության և Մատենադարանի արաբերեն  
ձեռագրերի օրինակով\*

**Բանալի բառեր** – բժշկական ձեռագրեր, երբա-  
յատառ արաբերեն, միջնադար, արաբական բժշկու-  
թյուն, իսլամական բժշկություն, բժշկություն աղքատ-  
ների համար, բժշկություն ճանապարհորդների հա-  
մար, Զաքարիա ալ-Ռազի, Ալ-Կունրի, Ալ-Զազար:

**Մուտք**

Միջնադարյան բժշկության վերաբերյալ աշխատությունները մեկնաբանում էին ախտորոշման և բուժման մեթոդները, ինչպես նաև նկարագրում միջնադարյան բժշկության դեղամիջոցները: Ըստ այդմ՝ միջնադարյան բժշկական աշխատություններն ընդհանուր առմամբ դասակարգվում են հետևյալ կերպ՝ ընդհանուր բժշկություն, բժշկարաններ, դեղաբանություն (ֆարմակալոգիա), տերմինների բառարան և այլն<sup>1</sup>:

Ընդհանուր բժշկության, այն է՝ բժշկության արվեստի (ṣinā‘ah al-tibb) վերաբերյալ ծավալուն աշխատությունների հետ, որոնք բաղկացած էին տեսական մասից (անատոմիա, ֆիզիոլոգիա, ախտորոշում,

\* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A098 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: Ընդունվել է տպագրության 06.03.2023:

<sup>1</sup> Այս հոդվածի շրջանակներում բժշկագիտության ճյուղերի դասակարգման համար առաջնորդվել ենք հետևյալ տպագիր և էլեկտրոնային գրականությամբ՝ Treasury of Oriental Manuscripts, Academy of Sciences of the Republic of Uzbekistan, Abū al-Rayhān al-Bīrūnī Institute of Oriental Studies, Tashkent: UNESCO Office Tashkent, 2012, Islamic Medical Manuscripts Home Page (nih.gov) (մուտք՝ 16.05.2022):

առողջապահական հարցեր, դիետեթիկա), գործնական մասից (բուժում) և դեղաբանությունից (պարզ դեղամիջոցներ (Materia Medica, արաբ. al-adwiyah al-mufradah) և բարդ դեղամիջոցներ (արաբ. qarābādhīn or aqrābādhīn)), զուգահեռ կիրառվում էին բժշկության գործնական մասի վրա հիմնված բժշկական աշխատություններ՝ բժշկարաններ (ռուս. лечебник, անգլ. self-help manuals, treatment manuals, medical handbooks, home medical manuals, compendium, արաբ. kitāb al- ‘ilāj):

Բժշկարանները գործնական բժշկության վերաբերյալ աշխատություններ են՝ անհատական և ընդհանուր պաթոլոգիայով: Դրանք բաժանվում են երկու խմբի՝ հայտնի հեղինակների օրիգինալ ստեղծագործություններ և կոմպիլյացիաներ՝ բանաբաղություններ: Առաջինները կազմում էին հայտնի բժիշկները, որոնց հիման վրա կազմվում էր բժշկարանների երկրորդ խումբը՝ կոմպիլյացիաները: Կոմպիլյացիաներ կազմում էին նաև ավելի փոքր շրջանների բժիշկները, որոնք զբաղվում էին միայն գործնական բժշկությամբ և արդեն իսկ եղած նյութը հարստացնում էին իրենց սեփական փորձերով: Նման բժշկարանները հիմնականում մնում էին որպես տվյալ բժշկի ընտանիքի սեփականություն և փոխանցվում սերնդեսերունդ՝ չկորցնելով իրենց նշանակությունը: Բժշկարանների կիրառման շրջանում դրանցում կատարվում էին հավելագրություններ. ավելացվում էին դեղատոմսեր, աղոթքներ և հնայագրեր:

### 1. Բժշկարաններ կամ «բժշկություն նրանց համար, ովքեր գրկված են բժշկին դիմելու հնարավորությունից»

Բժշկարանները ստեղծված էին հիմնականում նրանց համար, ովքեր չունեին բժշկի դիմելու հնարավորություն՝ հասարակ ժողովրդի, կարիքավորների, ձանապարհորդների, մեկուսացած կրոնական համայնքների և այլն: Դրանք բժշկությունը հասանելի էին դարձնում հասարակ, կարիքավոր մարդկանց, քանի որ դրանցում բուժման համար հաշվի էին առնվում տվյալ շրջանում հասանելի բնական միջոցները, որոնցից պատրաստվող դեղամիջոցները կարող էին փոխարինել թանկ և դժվարամատչելի դեղերին, ներառվում էին նաև ավանդական բժշկության մեթոդներ, մոգություն և աղոթքներ: Բժշկարաններում վիրահատությունների մասին ցուցումներ չկային:

Գոյություն ունեին բժշկագիտական գրվածքների զանազան ժանրեր (genres of medical writing), ինչպիսիք էին՝ «բժշկություն նրանց համար, ովքեր գրկված են բժշկի դիմելու հնարավորությունից», «բժշկություն մեկուսացած կրոնական համայնքների համար», «բժշկություն աղքատների համար» և այլն: Կային նաև չափածո բժշկարաններ. շատ միջնադարյան բժիշկներ բանաստեղծական շնորհով էին օժտված և այն շատ հաջող օգտագործում էին գիտական ստեղծագործություններում<sup>2</sup>: Նմանատիպ ստեղծագործությունների մեծ մասը հետմոնղոլական շրջանի է և գրված է պարսկերենով<sup>3</sup>:

## 2. Բժշկարանների գրական ժանրերի սկզբնավորումը միջնադարյան իսլամական բժշկագիտության մեջ

Հայտնի է, որ ինչպես հուդայականությունն ու քրիստոնեությունը, այնպես էլ իսլամը պատվիրում է հավատացյալներին կարիքավորներին և հիվանդներին բուժել անվճար: Ուստի պատահական չէ, որ միջնադարյան իսլամական բժշկության (նույնն է թե՛ արաբական, արաբաիսլամական, հունա-արաբական)<sup>4</sup> նշանավոր բժշկապետերը, որոնք միջնադարյան բժշկության ոլորտում կատարել են բժշկագիտական ամենանշանավոր հայտնագործություններն ու նորամուծությունները

---

2 Արաբական դիդակտիկ չափածո աշխատությունները ծառայում էին գիտելիքը մատչելի ձևով մատուցելու և սերտածը հեշտ հիշելու նպատակին: Բժշկական պոեզիան թերապևտիկ պարզ հասկացություններ սովորելու տարածված միջոց էր, քանի որ հանգավոր քառատողերն ուսանողին հնարավորություն էին տալիս արագ և հեշտ մտապահելու հիմնական գաղափարները: Ուստի բժշկական բազմաթիվ աշխատություններ վերածվեցին չափածոների: Դրանք սովորաբար գրվում էին **ռաջագ** բանաստեղծական չափով և կոչվում էին **ուրջուզա** (urjūzah):

Մատենադարանում պահվում է բժշկական չափածո ժողովածու (թիվ 1428), որի մեծ մասը Աբու Ալի ալ-Հուսեյն իբն Աբդ Ալլահ իբն Սինայի (Ավիցեննա) ուրջուզաներն են «Ուրջուզա բժշկության վերաբերյալ» («*Urjūzah fi al-ṭibb*»), «Ալ-շեյխ ալ-Ռայիս իբն Սինայի ուրջուզան անատոմիայի վերաբերյալ» («*Urjūzah al-Shaykh al-Ra'īs Ibn Sīnā fi al-tashrīḥ*»), Իբն Սինային վերագրվող «Ուրջուզա զարկերակի և մեզի բացատրության վերաբերյալ» («*Urjūzah fi ta'rīf al-nabḍ wa-al-bawl*») և «Ուրջուզա աչքի կոպի հիվանդությունների վերաբերյալ» («*Urjūzah fi amrād jafn al-'ayn*»), Հիպոկրատեսին, երբեմն նաև Իբն Սինային վերագրվող «Հանալի ուրջուզա Հիպոկրատի քանիհիզ խնդիրների վերաբերյալ» («*Urjūzah laf'fah fi Qadāyā Iḥḥāḥ al-khamsah wa-al-'ishrun*») և Շամս ալ-Դին Մուհամմադ իբն Մաքքիի «Հակիրճ ուրջուզա արյունատար անոթների քանակի մասին» («*Urjūzah wajzah fi 'adad al-'urūq al-mafṣūdah*»):

3 Օրինակ Շիհաբ ալ-Դին իբն Աբդ ալ-Քարիմ Կիվան ալ-Նագաուրիի (*Shihāb al-Dīn ibn 'Abd al-Karīm Qivām Nāgawrī*, 14-րդ դար) «Հիվանդության բուժումը», որը հայտնի է նաև «Շիհաբյան բժշկություն» խորագրով (տես *The Treasury of oriental manuscripts*, էջ 33):

4 Գիտության պատմության մեջ **արաբական, իսլամական, արաբաիսլամական, հունա-արաբական բժշկություն** կամ **հունա-արաբական և իսլամական բժշկություն** տերմինները վերաբերում են մուսուլմանական քաղաքակրթության ոսկե դարաշրջանում (7-րդ դարի կեսից մինչև 15-րդ դարի վերջը) մշակված բժշկությանը (տես *Bashar Saad and Omar Said, Greco-Arab and Islamic Herbal Medicine: Traditional Systems, Ethics, Safety, Efficacy, and Regulatory Issues*, Hoboken, NJ: Wiley, 2011, էջ 1):

(հատկապես ինունային համակարգի հայտնաբերումը, մանրէաբանական գիտության ստեղծումը և դեղաբանության բաժանումը բժշկությունից), միջնադարյան բժշկությունը գիտական նոր մակարդակի հասցնելուց զատ, չանտեսեցին հասարակության այն խմբի բժշկական կարիքները, որը զրկված էր բժշկի դիմելու հնարավորությունից:

Իսլամական բժշկության մեջ «բժշկություն նրանց համար, ովքեր զրկված են բժշկի դիմելու հնարավորությունից» բժշկական գրական ժանրը կապված է հայտնի բժշկագետ Աբու Բաքր Մուհամմադ իբն Զաքարիա ալ-Ռազիի (865-925 թթ.) անվան հետ, որն ունի համանուն աշխատություն («Kitāb man lā yahḍuruḥu al-ṭabīb»)⁵: Ալ-Ռազիի մարդասեր և բարեգութ բժշկի համբավ էր վայելում ու թեև Սամանիների (Միջին Ասիա, 819-999 թթ.) պալատական բժիշկն էր, Բաղդադում և Ռեյում հիվանդանոցներ էր ղեկավարում, բայց իր կարիքավոր հիվանդներից բուժման վճար չէր վերցնում:

Ինչպես արդեն նշեցինք, բժշկարաններ գրվում էին նաև մեկուսացած կրոնական համայնքների համար, ինչպիսիք էին, օրինակ, քրիստոնեական վանքերը: Իսլամական բժշկության մեջ այս ժանրի ամենահայտնի բժշկարանի հեղինակը բաղդադցի քրիստոնյա բժիշկ Աբու Հասան ալ-Մուլիթար իբն Աբդուն իբն Բուտլանն է (Abū al-Ḥasan al-Mukhtār ibn ‘Abdūn Ibn Buṭlān, մահ. Հիջրայի 458/1066 թ.): Նա իր կյանքի վերջին շրջանում հաստատվել էր Անտիոքում, դարձել վանական և գրել արաբերեն բժշկական ուղեցույց վանականների համար, որոնք բնակվում էին մեկուսացած վանքում: Աշխատությունը կոչվում է «Համառոտակի վանքերի և վանականների համար» («Kunnāsh al-adyirah wa-al-ruhbān») կամ «Հիվանդությունների կառավարման մասին՝ առավելապես սովորական սննդամթերքի և մատչելի դեղամիջոցների միջոցով, հատկապես վանքերի վանականների և քաղաքից հեռու գտնվողների համար» («Fī tadbīr al-amrād al-‘arīḍah ‘alā al-akthār min al-aghdhīyah al-ma‘lūfah wa-al-adwiyah al-mawṣufah li-yantaf‘u bi-hā ruhbān al-adyirah wa-man ba‘uda ‘an al-madīnah»)⁶:

Իբն Բուտլանն իր բժշկարանում առաջարկում էր սննդամթերք և դեղամիջոցներ, որոնք հեշտությամբ կարելի էր ձեռք բերել, կամ

5 Ընդհանրապես ընդունված է այս աշխատությունն անվանել նաև «Բժշկություն աղքատների համար» («*Tibb al-fuqarā*»), սակայն, ըստ Իբն Ուսայբայի, այն Ալ-Ռազիի մեկ այլ աշխատություն է, որը մեզ չի հասել (տես *Bos G.*, Ibn Al-Jazzār on Medicine for the Poor and Destitute, “Journal of the American Oriental Society”, 1998, N 118 (3), էջ 366, <https://doi.org/10.2307/606065> (մուտք՝ 16.05.2022)):

6 Տե՛ս “Medical Monographs”, on Islamic Medical Manuscripts Home Page ([nih.gov](http://nih.gov)):

որոնք այդ վանական համայնքն ինքը կարող էր արտադրել: Այդ բժշկարանն առհասարակ կարող էր օգտակար լինել յուրաքանչյուրի համար, որին քաղաքային բժշկական օգնությունն անհասանելի էր:

«Բժշկությունն նրանց համար, ովքեր զրկված են բժշկի դիմելու հնարավորությունից» ժանրը սերտ աղերսներ ունի միջնադարյան բժշկական գրական մեկ այլ ժանրի հետ, որը կոչվում է «բժշկություն աղքատների համար»<sup>7</sup>: Այս ժանրը տարածված էր ողջ միջնադարյան իսլամական և արևմտյան լատինական գրականության մեջ, թեև դրա արմատները կարելի է գտնել դեոնտոլոգիական (բժշկական էթիկա) աշխատություններում, որոնք ակնհայտորեն ազդված են հիպոկրատյան ու գալենյան գրվածքներից և ձիշտ վարքագծի ու բժիշկների վերապատրաստման կանոններ են սահմանում<sup>8</sup>:

Միջնադարում հիվանդի բուժումը պայմանավորված էր ոչ միայն ժամանակով և վայրով, այլև քաղաքական և սոցիալական մի շարք գործոններով. հիվանդի դասակարգը, տնտեսական և սոցիալական մակարդակն էին որոշում նրա խնամքի տեսակը<sup>9</sup>: Բժիշկների ծառայությունները հասանելի չէին կամ դժվարհասանելի էին հասարակ ժողովրդին: Ավելին՝ բժիշկ կարելի էր գտնել միայն մեծ քաղաքներում, իսկ հանրաձանաչ բժիշկների մեծ մասը, մասնավորապես՝ իսլամական աշխարհում, սուլթանների անձնական բժիշկներն էին (թեկուզ պալատում իրենց ողջ ծառայության ընթացքում մեկ կամ երկու անգամ անհրաժեշտ լիներ նրանց ծառայությունը) կամ էլ արդեն գիտելիքի բարձր մակարդակի հասած բժշկագետներ: Քաղաքների և գյուղերի աղքատ բնակչությունը զրկված էր բժշկական ամեն կարգի օգնությունից, իսկ եթե ինչ-որ մեկը աղքատին օգնություն էր ցուցաբերում, որպես կանոն, պարզվում էր, որ խաբերա է կամ շատ տգետ բժիշկ<sup>10</sup>:

Արաբական բժշկության մեջ «բժշկություն աղքատների համար» ժանրը կապված է Աբու Ջաաֆար Ահմադ իբն Իբրահիմ իբն Աբի Խալիդ իբն ալ-Ջազարի (Abū Ja‘far Aḥmad ibn Ibrāhīm ibn Abī Khālid Ibn al-Jazzār) անվան և նրա «Բժշկություն աղքատների և չքավորների հա-

7 Այս ճյուղի հիմնադիրն է համարվում Ասաֆ Ջուդայտը (առավել մանրամասն տես **Bos G.**, նշվ. աշխ., էջ 366):

8 Տես նույն տեղում, էջ 368-369:

9 Տես **Ullman M.**, *Islamic Medicine (Islamic surveys 11)*, Edinburgh University Press, 1997, էջ 49, **Pormann P. E., Savage-Smith E.**, *Medieval Islamic Medicine*, Edinburgh University Press, 2007, էջ 1-5:

10 Տես **Ullman M.**, նշվ. աշխ., էջ 49:

մար» («Ṭibb al-fuqarā' wa-l-masākīn») աշխատության հետ: Այս աշխատությունը նախատեսված էր նրանց համար, ովքեր չէին կարող օգտվել Ալ-Ջազարի ամենահայտնի՝ «Դրույթներ ճանապարհորդի և սնունդ նստակյացի համար» («Zād al-musāfir wa-qūt al-hādir»), և այլ հեղինակների բժշկարաններից: Ալ-Ջազարի աշխատության երրայտառ արաբերեն մի օրինակ, որն այդ աշխատության հայտնի երրայտառ արաբերեն ամբողջական եզակի ձեռագիրն է, Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի մաս է կազմում (Ms. 1752)<sup>11</sup>:

Ուշագրավ է նաև այն, որ «բժշկություն աղքատների համար» ժանրի աշխատություններում որպես բուժման միջոց ներկայացվում են նաև կախարդանքը, մոգությունը, ժողովրդական բժշկության վրա հիմնված հավատալիքները, իսկ որպես դեղամիջոց՝ նաև կենդանիների օրգանները: Սրանք այն կարևոր բնութագրիչներից են, որոնցով այս ժանրը տարբերվում է «բժշկություն նրանց համար, ովքեր զրկված են բժշկին դիմելու հնարավորությունից» ժանրից, որով գրված բժշկարաններում առաջարկվում են միայն բնական միջոցներ<sup>12</sup>:

Թեև բժշկարաններն ի սկզբանե ստեղծվել են բոլոր նրանց համար, ովքեր զրկված էին բժշկի դիմելու հնարավորությունից, այնուամենայնիվ, հետագայում շատ հայտնի պալատական բժիշկներ սկսեցին բժշկարաններ գրել և նվիրել իրենց ժամանակի հայտնի կառավարիչներին, խալիֆաներին, սուլթաններին, որոնց իրենք ծառայում էին: Օրինակ՝ «Գիրք հարստության և ցանկությունների» («Kitāb al-Ghinā wa-al-munā») աշխատությունը<sup>13</sup>, որը հայտնի է նաև «Մանսուրյան արևապաշտպան» («Al-Shamsiyyah al-Mansūriyah») խորագրով, հեղինակը՝ Աբու Մանսուր ալ-Հասան իբն Նուհ ալ-Կումրին (Abū Mansūr al-Ḥasan ibn Nūḥ al-Qumrī [al-Qamarī al-Bukhārī], մահ. մոտավորապես Հիջրայի 380/990 թ.), դատելով վերնագրից, նվիրել է Բուխարայի կառավարիչ Մանսուր ալ-Սամանիին (961-976 թթ.), որի կողմից մեծ հարգանք էր վայելում:

Հեղինակի մասին տեղեկությունները սակավ են, գիտենք միայն, որ Ալ-Կումրին Իբն Սինայի ուսուցիչներից էր, իր ժամանակի ամենա-

11 Տե՛ս **Makaryan V., Avetisyan A.**, Arabic Medical Handbooks of Matenadaran Collection, “Manuscript Studies: A Journal of the Schoenberg Institute for Manuscript Studies”, upcoming in fall 2023:

12 Տե՛ս **Bos G.**, նշվ. աշխ., էջ 371:

13 Աշխատության արաբերեն մի ձեռագիր օրինակ ներառված է Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուում (թիվ 1415 ձեռագիր): Այն բժշկագիտական ժողովածու է՝ բաղկացած երկու աշխատությունից: Առաջինը Ալ-Կումրիի վերոնշյալ գործն է, իսկ երկրորդը Դատուդ ալ-Անթաքիի «Աշխատություն փորձված դեղամիջոցների մասին» («Risālat al-Mujarrabāt») փոքրածավալ աշխատությունը:

նշանավոր գիտնականներից՝ հայտնի և՛ որպես բժիշկ-տեսաբան, և՛ որպես գործող բժիշկ:

Տեսական և գործնական բժշկության վերաբերյալ իր փայլուն գիտելիքները թույլ են տվել Ալ-Կումրիին նշել ներկայացված հիվանդությունների պատճառները և առաջարկել բուժման ամենաարդյունավետ մեթոդները՝ շատ հաճախ մեջբերումներ կատարելով նաև լավագույն բժիշկներից, հասկապես՝ Զաքարիա ալ-Ռազվից:

### 3. «Բժշկարան» եզրույթի կիրառության շուրջ

Միջնադարյան իսլամական բժշկական աշխատությունների բովանդակային և ժանրային տարակարգումների ուսումնասիրության և համեմատական աշխատանքի միջոցով մեզ հաջողվեց լուծել մեր առջև դրված մի կարևոր խնդիր, այն է՝ որոշակիություն մտցնել հայերեն «բժշկարան» եզրի իմաստի և կիրառման հարցում: Խնդիրն այն է, որ մեր օրերում հայկական միջավայրում (նաև գիտական) հաճախ միջնադարյան բոլոր բժշկագիտական աշխատությունների համար առանց տարբերակման օգտագործվում է «բժշկարան» եզրույթը, ինչը շփոթություն է առաջացնում տվյալ աշխատության բժշկագիտական ուղղվածության հարցում: Այժմ կարող ենք միանշանակ պնդել, որ հայերեն «բժշկարան» եզրը<sup>14</sup> համապատասխանում է հենց գործնական բժշկությանը վերաբերող աշխատություններին և վերոնշյալ բժշկական գրական ժանրերի գործերին:

Այդուհանդերձ, միջնադարյան հայերեն բժշկարանների հիշատակարաններում հստակ նշվում են դրանց բովանդակային ուղղվածությունն ու նպատակը: Օրինակ. «Փափաքեցայ գրել այս փոքրիկ բժշկարանս, թեև կարողութիւնէս վեր գործ մ' է. որովհետեւ ասանկ բաները ասելի հարուստ ու դրամ շատ ունեցող, հոգ չունեցող մարդու վայել է. բայց նկատելով՝ որ այդպիսիները կարևորութիւն չեն տար, ես եռանդ ունեցայ անոր ձեռնարկելու, լոկ այն մտածումով թէ, թերեւս պէտք ունեցողներ զայն կարդալու ըլլան, ինծի պէս մեղաւորի մը ողորմիս կը հանեն: Ի՛նչ ընեն, երկրային հարստութիւն մը չունիմ որ աղքատներու բարիք ընեն. ուստի այս պզտի գիրքը սկսայ գրել. ես

14 Բացատրվում է որպես՝ «1. Բժշկանոց: 2. Բժշկական դեղ, դարման, միջոց: 3. Գիրք, որի մէջ ամանդվում են զանազան հիւանդութիւններից բժշկվելու միջոցներ և դեղեր» (**Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 369):

կանաւ սկսայ, Աստուած վերջը հասցնէ...»<sup>15</sup>: Կամ. «...թեպէտ բազում ցաւ կայ մարդոյս վրայ. այս փոքրիկ Հեքիմարանիս մէջն չիկայ. եւ վ[ա]խ[ն] քաղաքացոց համար չէ այս Հեքիմարանս, որ բազում բժիշկ կան, եւ կարօտ չեն այսօր...»<sup>16</sup>:

Վերը նշված շփոթությունը թերևս կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ հայերեն միջնադարյան բժշկագիտական գործերի շարքում գերիշխում են հենց բժշկարանները, ինչի հետևանքով էլ «բժշկարան»-ը՝ որպես միջնադարյան բժշկագիտական աշխատությունները բնութագրող ընդհանրական եզր, հայկական միջավայրում սովորությանին ուժով տարածվել և կիրառվել է ոչ միայն հայկական, այլև հունահռոմեական և իսլամական բժշկագիտական աշխատությունների համար և համարժեք դարձել «բժշկական/բժշկագիտական աշխատություններ» հավաքական հասկացությանը:

Փաստորեն, բժշկագիտությանը կամ «բժշկության արվեստին» վերաբերող աշխատությունների բովանդակային և ժանրային տարակարգումների ուսումնասիրության միջոցով հնարավոր է դառնում նաև պատկերացում կազմել միջնադարյան բժշկության խնդիրների և դրանց լուծման ձևերի ու միջոցների մասին:

**Վեներա Ռ. Մակարյան** – հեղինակ է շուրջ 20 գիտական հոդվածի և համահեղինակ 1 մենագրության: Զբաղվում է հայ-արաբական միջնադարյան և նոր շրջանի պատմամշակութային հարաբերություններին, պատմական Սիրիայի հայերի կարգավիճակին առնչվող հարցերով, ինչպես նաև արաբերեն ձեռագրերի նկարագրությամբ և ուսումնասիրությամբ:

Էլ. հասցե՝ v\_makaryan@matenadaran.am, makaryanvenera@yahoo.com

15 **Թորգոմեան Վ.**, Հայ բժշկական ձեռագիրք, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, Մխթարեան տպարան, 1921, յուլիս-օգոստոս, էջ 387:

16 **Թորգոմեան Վ.**, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, «Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 1924, մարտ, էջ 74:

Ղատելով «Հայ բժշկական ձեռագիրք» հոդվածաշարի վերնագրից և դրանում ներկայացվող ողջ նյութից վաստակաշատ գիտնականը «բժշկարան» եզրը կիրառել է գործնական բժշկության վերաբերյալ աշխատությունները բնութագրելու համար (տե՛ս **Թորգոմեան Վ.**, Հայ բժշկական ձեռագիրք, «Հանդէս ամսօրեայ», 1892, յունիս, էջ 166-169, նոյեմբեր, էջ 333-336, 1893, յուլիս, էջ 197-201, սեպտեմբեր, էջ 280-283, 1899, ապրիլ, էջ 108-112, յուլիս, էջ 201-202, դեկտեմբեր, էջ 377-378, 1920, հոկտեմբեր, էջ 351-358, 1921, յուլիս-օգոստոս, էջ 385-395, 1924, յուլիս-օգոստոս, էջ 318-322, **Նույնի** Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, «Բազմավէպ», 1923, յունուար, էջ 7-11, փետրուար, էջ 39-43, մարտ, էջ 69-71, ապրիլ, էջ 104-107, մայիս, էջ 138-142, յունիս, էջ 167-169, յուլիս, էջ 204-206, օգոստոս, էջ 229-230, հոկտեմբեր, էջ 301-303, նոյեմբեր, էջ 328-331, 1924, յունուար, էջ 10-11, մարտ, էջ 74-77, մայիս, էջ 169-172, յունիս, էջ 207-208, յուլիս, էջ 232-233, օգոստոս, էջ 263-266, սեպտեմբեր, էջ 302-305, հոկտեմբեր, էջ 335-338, նոյեմբեր, էջ 356-359, դեկտեմբեր, էջ 386-389, 1925, փետրուար, էջ 38-39, մարտ, էջ 70-72, ապրիլ, էջ 104-107, մայիս, էջ 134-137, յունիս, էջ 167-170, հոկտեմբեր, էջ 292-294, 1926, փետրուար, էջ 43-46, մարտ, էջ 67-69, մայիս, էջ 134-139, յունիս, էջ 166-169, սեպտեմբեր, էջ 266-269):

## THE PURPOSES OF WRITING AND APPLYING MEDICAL HANDBOOKS

On the Example of Islamic Medicine and Arabic Manuscripts of the Matenadaran

Venera R. Makaryan

*Candidate of Sciences in History*

**Key words** – medical manuscripts, Judaeo-Arabic, the Middle Ages, Arabic medicine, Islamic medicine, medicine for the poor, medicine for travelers, Zakariyyā' al-Rāzī, al-Qumrī, al-Jazzār.

Medieval medical handbooks are works on practical medicine with individual and general pathology used with the works on general medicine in parallel.

Self-help manuals were created mainly for those who did not have the opportunity to see a doctor, i.e. for common people, travelers, the poor, isolated religious communities, etc. Medical handbooks made medicine accessible to ordinary, needy people, since they took into account the natural remedies available in the region, which could supersede expensive and hard-to-reach medicine. They also included traditional medicine, magic and prayers.

Medical handbooks do not contain instructions on surgeries. In order to meet the medical needs of all the above groups of society, medical books were written in the corresponding genres of medical literature, such as “medicine for those who are deprived of the opportunity to see a doctor”, “medicine for isolated religious communities”, “medicine for the poor”, etc.

The study of the content and genre classifications of medieval Islamic medical works helped us to precise the semantics of the Armenian term բժշկարան (bzshkaran – “medical book) which today is used without distinction for all types of medieval medical works. In reality it should be applied to works related to practical medicine (including the above-mentioned genres of medical writing).

## ЦЕЛИ НАПИСАНИЯ И ПРИМЕНЕНИЯ ЛЕЧЕБНИКОВ

На примере исламской медицины и арабских рукописей Матенадарана

Венера Р. Макарян

*Кандидат ист. наук*

**Ключевые слова** – медицинские рукописи, иудео-арабский, средневековые, арабская медицина, исламская медицина, медицина для бедных, медицина для путешественников, Закария ар-Рази, Аль-Кумри, Аль-Джазар.

В средние века наряду с трудами по общей медицине, которые состояли из теоретической части (анатомия, физиология, диагностика, вопросы здравоохранения, диетэтика), практической части (лечение), фармакологии (*Materia Medica*) и фармакопеи применялись лечебники. Лечебники – это работы по практической медицине, по индивидуальной и общей патологии.

Лечебники создавались в основном для тех, кто не имел возможности обратиться к врачу, т.е. для простых людей, путешественников, бедняков, изолированных религиозных общин и т.д. Лечебники сделали медицину доступной для простых, нуждающихся людей, поскольку учитывали имеющиеся в регионе природные ресурсы для лечения, учили изготовлению лекарств, которые могли бы заменить дорогие и труднодоступные средства. В них описывались также способы использования народной медицины, магия и молитвы. В лечебниках нет инструкций по проведению хирургических операций. В целях удовлетворения медицинских потребностей всех вышеперечисленных групп общества лечебники писались в соответствующих жанрах медицинской литературы, таких как медицина «для тех, кто лишен возможности обратиться к врачу», «для изолированных религиозных общин», «для бедных» и т.д.

Изучение жанров средневековых исламских медицинских произведений помогло нам внести определенность в семантику армянского термина «բժշկարան» ([бжшкаран]), употребляемого сегодня для описания всех средневековых медицинских трудов. На самом деле этот

термин применим только к сочинениям, относящимся к практической медицине (включающим и вышеупомянутые жанры медицинской литературы).

## REFERENCES

1. **Malkhaseants' St.**, Hayerēn bats' atrakan baṙaran, Yer., 1944 (**In Armenian**).
2. **T'orgomean V.**, Hay bzhshkakan dzeṙagirk', "Handēs amsōreay", Vienna, Mkhit'arean tparan, 1921, yulis-ōgostos, ēj 386-395 (**In Armenian**).
3. **T'orgomean V.**, Hay bzhshkakan dzeṙagirk' S. Ghazaṙu vank'in, "Baznavēp", Venetik, S. Ghazaṙ, 1924, mart (**In Armenian**).